ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N ՄՇԴ-209-2023 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«07» «06» 2023 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի (այսուհետ՝ Պետական մարմին)՝ որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Կ. Նաղդալյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով ժամանակակից արվեստի վարչության 2023թ.-ի հունիսի 21-ի Ն/13/13910-2023 զեկուցագիրը և 2023 թվականի ապրիլի 13-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-209-2023 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 9.1-ին կետի՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 10-ը»:

1.2. Պայմանագրի Հավելված N 1-ի 3.3 կետի «օգոստոս» բառը փոխարինել «նոյեմբեր» բառով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է մեկ թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի միջև ստորագրելու պահից:

3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարություն	«Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Արտաշատ, Օգոստոսի 23
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 900018002544, ՀՎՀՀ 04201342
Հ/Հ 900011032878 ՀՎՀՀ 02698732	Հեռ՝ /0-235/ 2-45-47
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Հ. Հակոբյան	Կ. Նաղդալյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.